Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 109 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ, ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ, ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԵՎ ՄԱՆԿԱԼՔՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	1. ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականության համահունչ՝ «ՍՕՍ-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի համար ռազմավարական առաջնահերթություն է մանկալքության կանխարգելմանն ուղղված ծրագրերի իրականացումը: Դրանցից են կազմակերպության կողմից իրականացվող ընտանիքների ամրապնդման և մանկալքության կանխարգելման ծրագրերը, որոնք իրականացվում են ՀՀ Կոտայքի մարզում, Իջևանի խոշորացված համայնքում, Երևան քաղաքում: Այս ծրագրերն ուղղված են ընտանիքների ամրապնդմանը և մանկալքության դեպքերի նվազեցմանը: Ընտանիքներին կազմակերպությունը ցուցաբերում է համապարփակ աջակցություն, նրանց սոցիալական և իրավական խնդիրների լուծման, ներընտանեկան բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավման, ինչպես նաև զբաղվածության և առողջապահական հարցերում: 2. Այս ծրագրի նպատակն է՝ 1) ՀՀ Կոտայքի մարզում, Իջևանի խոշորացված համայնքում, Երևան քաղաքում մանկալքության դեպքերի նվազեցում. 2) ծրագրի շահառու ծնողների մոտ ծնողավարության գիտելիքների և հմտությունների զարգացում. 3) ծրագրի շահառու երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնում. 4) ծրագրի շահառու ընտանիքների սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավում. 5) ներընտանեկան միջանձնային հարաբերությունների բարելավում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների օրենքներով նախատեսվող արտոնություններից
3.	Բարեգործը	Մանկական Գյուղեր Միջազգային կազմակերպություն (Հերման Գմայների փողոց 51 A-6020 Ինսբրուկ, Ավստրիա)

4.	Ծրագրի կատարողը	«ՍՕՍ-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը (ՀՎՀՀ՝ 03517269, ՀՀ, քաղ. Երևան, Հր. Քոչարի 8 բն. 18-19)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Կոտայքի մարզ, Իջևանի խոշորացված համայնք, Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններ, այս առնչվում է սոցիալական, իրավական և կրթական բնագավառներին
6.	Ծրագրի բյուջեն	1,044,062,013 դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	Ծրագրում ընդգրկված են սոցիալական ռիսկի ենթակա շուրջ 2660 երեխա, 610 ընտանիքներ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի հունվարի 14-ից մինչև 2025 դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Կրթադաստիարակչական աջակցություն շահառուների համար՝ 25,336,200 դրամի չափով, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի հունվարի 27-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում: 2. Առողջության առաջնային պահպանում, անհատական և խմբային հոգեբանական վերականգնողական աշխատանք ծրագրի շահառու երեխաների և ծնողների հետ, ինչպես նաև ծնողավարության հմտությունների դասընթացների կազմակերպում, իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն ծրագրի շահառուների համար՝ 103,324,842 դրամի չափով, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի հունվարի 27-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում: 3. Ծրագրի շահառուներին նյութական, տնտեսական կայունացման աջակցության՝ մասնավորապես սննդի, հագուստի, կոշիկի, անկողնային, խոհանոցային, ինչպես նաև առաջնային անհրաժեշտության պարագաների տրամադրում, տնտեսական կայունացման նպատակով աշխատանքային գործիքների, էլեկտրական և համակարգչային սարքավորումների տրամադրում՝ 198,249,882 դրամի չափով, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի հունվարի 27-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում: 4. Տրամադրվող տարածքի (տեղական ինքնակառավարման մարմինների կողմից անհատույց տրամադրված՝ ժամանակավոր օգտագործման տարածքներ, որոնք օգտագործվում են ծրագրերի իրականացման նպատակով) և սարքավորումների վերանորոգում, գույքի ձեռքբերում և վերանորոգում, տեխնիկական բազայի ապահովում՝ 28,174,500 դրամի չափով, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի հունվարի 27-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում:

		5. Տրանսպորտային միջոցների նորոգման, տեխնիկական սպասարկման, շահագործման ծառայությունների և վառելանյութի ձեռքբերում՝ 28,114,668 դրամի չափով, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի հունվարի 27-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում: 6. Ծրագրի մասնագիտական անձնակազմի (շահառուների հետ անմիջականորեն աշխատող անձնակազմի) աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների, բժշկական ապահովագրության վճարում՝ 452,095,848 դրամի չափով, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի հունվարի 27-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում: 7. Երեխաների խնամքի ցերեկային կենտրոնում կրթադաստիարակչական աջակցություն (դասապատրաստումների կազմակերպում, գրենական պիտույքների և դասագրքերի ձեռքբերում, ախտահանող նյութերի ձեռքբերում, պետական տոների շրջանակներում միջոցառումների կազմակերպում և նվերների փաթեթների տրամադրում)՝ 53,232,000 դրամի չափով, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի հունվարի 27-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում: 8. Կազմակերպական ծախսերը (աշխատակազմի աշխատավարձ, դասընթացներ, սուպերվիզիաներ, գրասենյակային պարագաներ, տրանսպորտային ծախսեր, այլ կազմակերպական ծախսեր) կազմում են՝ 155,534,073 դրամ 2023 թվականի հունվարի 27-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Կրթադաստիարակչական աջակցություն շահառուների համար՝ 1) դպրոցական պարագաների ձեռքբերում (դպրոցական պայուսակներ, գրչատուփեր, գրենական պիտույքներ՝ տետրեր, նկարչական ալբոմներ, մատիտներ, գրիչներ, սոսինձ, գունավոր թղթեր և այլն)՝ 22,045,200 դրամ. 2) կրթադաստիարակչական նյութերի և պարագաների ձեռքբերում՝ խմբակների և միջոցառումների կազմակերպման համար (ներկեր, մատիտներ, գրիչներ, ծեփան, գունավոր թղթեր, սոսինձ, թել, կտոր, մկրատ, վրձիններ և այլն)՝ 3,291,000 դրամ: 2. Առողջության առաջնային պահպանում, անհատական և խմբային հոգեբանական վերականգնողական աշխատանք ծրագրի շահառու երեխաների և ծնողների հետ, ինչպես նաև ծնողավարության հմտությունների դասընթացների կազմակերպում, իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն (ընտանիքներին սոցիալական իրավունքների վերաբերյալ պարզաբանումներ և ուղղորդում, ինչպես նաև երեխաների իրավունքների վերաբերյալ նրանց իրազեկվածության բարձրացում)՝

		1) ծրագրի շահառուների համար դեղորայքի, բժշկական օժանդակ սարքավորումների, օպտիկական ակնոցների, օրթոպեդիկ կոշիկների, բժշկական ծառայությունների (հետազոտություններ և թերապևտիկ ծառայություններ) ձեռքբերում՝ 38,371,050 դրամ. 2) անհատական և խմբային հոգեբանական վերականգնողական աշխատանք ծրագրի շահառու երեխաների և ծնողների հետ, ինչպես նաև ծնողավարության հմտությունների դասընթացների կազմակերպում՝ 58,245,792 դրամ. 3) իրավաբանական խորհրդատվության և աջակցության (ընտանիքներին սոցիալական իրավուքների վերաբերյալ պարզաբանումներ և ուղղորդում, ինչպես նաև երեխաների իրավունքների վերաբերյալ նրանց տեղեկացվածության բարձրացում) ծառայությունների ձեռքբերում՝ 6,708,000 դրամ: 3. Ծրագրի շահառուներին նյութական, տնտեսական կայունացման աջակցություն՝ 1) շահառուների համար սննդի, հագուստի, կոշիկների անկողնային, խոհանոցային, ինչպես նաև առաջնային անհրաժեշտության պարագաների ձեռքբերում ՝ 120,408,300 դրամ. 2) տնտեսական կայունացման նպատակով աշխատանքային գործիքների, էլեկտրական և համակարգչային սարքավորումների տրամադրում (աշխատանքային գործիքների ձեռքբերում՝ վարսահարդարման, մատնահարդարման, դիմահարդարման, ոտնահարդարման գործիքներ, կտորեղեն և կարի այլ գործիքներ, կարի մեքենաներ, թխվածք պատրաստելու վառարան, վարորդների համար մեքենայի սարքեր /օրինակ գազի լիցքավորման գլան/ և այլն.)՝ 77,841,582 դրամ: 4. Տրամադրվող տարածքի (տեղական ինքնակառավարման մարմինների կողմից անհատույց տրամադրված՝ ժամանակավոր օգտագործման տարածքներ, որոնք օգտագործվում են ծրագրերի իրականացման նպատակով) և սարքավորումների վերանորոգում, գույքի ձեռքբերում և վերանորոգում, տեխնիկական բազայի ապահովում ՝ կազմում է 28,174,500 դրամ: 5. Տրանսպորտային միջոցների նորոգման, տեխնիկական սպասարկման ծառայությունների և վառելանյութի ձեռքբերում ՝ 28,114,668 դրամ: 6. Երեխաների խնամքի ցերեկային կենտրոնում կրթադաստիարակչական աջակցություն (դասապատ-րաստումների կազմակերպում, գրենական պիտույքների և դասագրքերի ձեռքբերում, ախտահանող նյութերի ձեռքբերում, պետական տոների շրջանակներում միջոցառումների կազմակերպում և նվերների փաթեթների տրամադրում)՝ 53,232,000 դրամ: 7. Կազմակերպական ծախսերը՝

		1) հեռահաղորդակցություն (հեռախոսի և ինտերնետի վարձավճար)՝ 8,895,600 դրամ. 2) գրասենյակային պարագաների ձեռքբերում՝ (թուղթ, գրենական պիտույքներ, տնտեսական պարագաներ, մաքրող և ախտահանող նյութեր, խմելու ջուր, սուրճ, թեյ և այլն)՝ 8,148,000 դրամ. 3) կլոր սեղանների/քննարկումների, հանդիպումների կազմակերպում համայնքի ներկայացուցիչների հետ՝ 6,450,000 դրամ. 4) կոմունալ ծառայություններ (գազ, ջուր, լույս, աղբահանություն)՝ 10,638,600 դրամ. 5) տրանսպորտային ծառայությունների ձեռքբերում (օգտագործվում է վարչական անձնակազմի կողմից)՝ 16,062,000 դրամ. 6) դասընթացներ աշխատակազմի համար՝ 17,610,000 դրամ. 7) անհատական սուպերվիզիայի անցկացում ծրագրի աշխատակիցների համար՝ 1,920,000 դրամ. 8) այլ կազմակերպական ծախսեր (գովազդային նյութեր, բանկային ծախսեր, չնախատեսված ծախսեր)՝ 3,855,000 դրամ. 9) արդյունքահեն կառավարման իրականացման և կարողությունների զարգացման նպատակով ծառայությունների ձեռքբերում՝ 5,733,450 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	1. Կազմակերպական ծախսերը 2023 թվականի հունվարի 27-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար կազմում են՝ 155 534 073 դրամ, որը համապատասխանաբար կազմում է բյուջեի 14.89 տոկոսը, այդ թվում՝ 1) վարչական անձնակազմի աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ, բժշկական ապահովագրություն՝ 76,221,423 դրամ. 2) հեռահաղորդակցություն (հեռախոսի և ինտերնետի վճար)՝ 8,895,600 դրամ. 3) գրասենյակային ծախսեր՝ (թուղթ, գրենական պիտույքներ, տնտեսական պարագաներ, մաքրող և ախտահանող նյութեր, խմելու ջուր, սուրճ, թեյ և այլն)՝ 8,148,000 դրամ. 4) կլոր սեղանների/քննարկումների, հանդիպումների կազմակերպում համայնքի ներկայացուցիչների հետ՝ 6,450,000 դրամ. 5) կոմունալ ծառայություններ (գազ, ջուր, լույս, աղբահանություն)՝ 10,638,600 դրամ. 6) տրանսպորտային ծախսեր (օգտագործվում է վարչական անձնակազմի կողմից)՝ 16,062,000 դրամ. 7) դասընթացներ աշխատակազմի համար՝ 17,610,000 դրամ. 8) անհատական սուպերվիզիայի անցկացում ծրագրի աշխատակիցների համար՝ 1,920,000 դրամ:

		9) այլ կազմակերպական ծախսեր (գովազդային նյութեր, բանկային ծախսեր, չնախատեսված ծախսեր)՝ 3,855,000 դրամ, 10) արդյունքահեն կառավարման իրականացման և կարողությունների զարգացման ծախսեր՝ 5,733,450 դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցելու է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ ոստիկանության, ինչպես նաև ՀՀ Կոտայքի և Տավուշի մարզպետարանների, տեղական ինքնակառավարման մարմինների, միասնական սոցիալական ծառայության, երեխաների պաշտպանության հարցերով զբաղվող տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների լայն շրջանակների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի համար 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

10.02.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ